շրջանի կառավարական գործերը, բայց, իրօք, դարձաւ միայն Ղարաբաղի իշխանութիւնը։ Հայերն ու Թուրքերը համերաշխ էին. գաւառի հայկական մասերում ղեկավարում էին հայերը, Թրքականում՝ Թուրքերը։ Անգամ հոկտեմբերեան յեղաշրջումից և Երևանի, Կարսի, Գանձակի ու Բաքուի Թրքական շարժումներից յետոյ էլ անդորրութիւնը Ղարաբաղում չխանգարուեց։

Այսպէս տևեց դրութիւնը մինչև 1918 Թւի ամառը, երբ լուծուեց Անդրկովկասի միութիւնը, Կովկասում երևացին Թիւրքերը, և Նուրի փաշան Գանձակում ձեռնարկեց խալամական բանակի կազմակերպութեան։ Միջկուսակցական բիւրօն՝ չկամենալով ենթարկուել նորաստեղծ Ադրբէջանին՝ որոշեց կազմել տեղական ինքնուրոյն իշխանութիւն և իր տեղը նշանակեց կոմիսարների խորհուրդ անունով մի մարմին, խառն՝ հայերից ու Թուրքերից։ Իսկ մի ամիս անցած էլ այս մարմինը փոխարինուեց ազատ Ղարաբաղի ժողովրդական կառավարութեամբ։

Սակայն, Թիւրք-ադրբէջանեան սադրանքների հետևանքով հետզհետէ Ղարաբաղի կեանքն էլ խառնափնթորուեց։ Անիշխանութիւնը սկսեց դլուխ բարձրացնել ամէն կողմ։ Եւլախ—Շուշի ճանապարհը փակուեց հայերի առջև։ Մի շարք վայրերում Թուրքերի կողմից տեղի ունեցան հայերի թալան ու սպանութիւններ։ Իրենց հերթին, հայերն էլ պատասխանում էին նոյն ձևով. ռուսական ռազմաճակատից վերադարձած զինուորները կամ սովահար գիւղացիք, յաճախ, յարձակւում էին քոչւորների վրա՝ թալանի և կողոպուտի նպատակով։ Բայց և այնպէս, հայ և Թուրք ղեկավարների ջանքերով, մինչև 1918Թ. ամառը ընդհանուր խաղաղութիւնը չխախտուեց։ Շուշի քաղաքում իրար յետևից հրաւիրուեցին երեք խառն համագումարներ, որոնք նպաստեցին հայ-Թրքական բարիհարևանական յարաբերութիւնների պահպանման։

Դրութիւնը փոխուեց արմատապէս, երբ Ղարաբաղի հորիզոնի վրա երևացին Թիւրքերը։ Թիւրքական մի բրիգադ, Զէմիլ Զահիդ բէյի հրամանատարութեան տակ և տեղական Թուրք բէգերի առաջնորդութեամբ, Եւլախից, ուղղուեց դէպի Շուշի՝ ճանապարհին ոմբակոծելով ու զինաթափելով հայկական գիւղերը։ Միաժամանակ յարձակման ենթարկուեց ու ոչնչացուեց Շուշիից դէպի Զանգեզուր տանող ճանապարհին ընկած Ղարաղշլաղ հայկական մեծ գիւղը, որը շաղկապի դեր էր կատարում Ղարաբաղի և Զանգեզուրի միջև։

Համաղարաբաղցիական երրորդ համագումարը, որ տեղի ունեցաւ սեպտ. 18—20-ին, Շուշիում, Թիւրքերի յառաջխաղացման առթիւ, որոշեց հրամայել և ընդունել Ադրբէջանի իշխանութիւնը։ Սեպտ. 26-ին Թիւրքերը առանց կուի մտան Շուշի և անմիջապէս զինաթափ արին հայերին։ Այս բանը սաստիկ զրդռեց հայերին, և երբ Թիւրքերը տեղափոխում էին գրաւած զէնքերը, նրանք յարձակուեցին ու գրաւեցին, որի պատճառով Թիւրքերը կախեցին երեք հայեր։ Հոկտ. 1-ին, զինաթափութեան յաջորդեցին ձերբակալութիւններ. բազմաթիւ հայ գործիչներ բռնուեցին ու նետուեցին բանտ։